


ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆ

ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ* 

Երևանի պետական համալսարան

Մույն հոդվածով հեղինակը նպատակադրվել է հաստատել գիտական այն հիպոթեզը, ըստ որի՝ հումանիշության երևույթը կարող է դրսևորվել նաև միննույն լեզուն կրող ժողովրդի գրավոր մշակույթում ստեղծված, ընդունված ու կիրառված տարբեր խորհրդանիշների միջև, և դա կարող է տեղի ունենալ անկախ այդ խորհրդանիշների բառային իմաստների բովանդակությունից: Հումանիշության այս տեսակը նկատվում է լեզվի բառային և քերականական մակարդակներից դուրս՝ ժողովրդի լեզվամտածողության և արժեքային համակարգի մեջ: Լեզվական մտածողությունն ու արժեքային համակարգը դրսևորվում են տվյալ լեզվով ստեղծված անհատական և բանահյուսական գրական-գեղարվեստական, անգամ պատմագրական, իմաստասիրական այն տեքստերի մեջ, որոնք ամենաշատն են բնորոշ տվյալ հանրության, տվյալ ազգի, տվյալ ժողովրդի ընդհանրապես հավաքականության տեսակի մտածողությանն ու դավանած արժեքների համակարգին: Հետևաբար՝ հոդվածում առաջ են քաջվում նման տեքստերն առանձնացնելու, դասակարգելու մոտեցումներ. խնդիրը առնչվում է այն սկզբունքին, թե տվյալ հանրությունը ինչ վերաբերմունք ունի դրանց նկատմամբ: Հիշյալ հանրային վերաբերմունքը դրսևորվում է այն իրողությամբ, թե արդյոք տվյալ տեքստը շաղկապվում է ժողովրդի հավաքական հիշողությանը. եթե այո, այսինքն՝ ժողովուրդը անընդհատ հիշում է այն, ուրեմն նման տեքստը կրում է այդ ժողովրդի արժեքային համակարգի կնիքը: Բիարկե, այդպիսին առաջին հերթին բանահյուսական տեքստերն են և բարձր հեղինակություն վայելող գրողների այն ստեղծագործությունները, որոնք ունեն լայն ճանաչում, որոնք տվյալ ժողովրդի ուշադրությունն են վայելում տարբեր ժամանակաշրջաններում: Նման տեքստերում համեմատաբար շատ գործածվող, համեմատաբար շատ հանդիպող բառերը, դրանցով արտահայտված երևույթները, առարկաները առանձնահատուկ նշանակություն են ստանում՝ հաճախ ձեռք բերելով խորհրդանշային արժեք:

* **Թադևոս Տոնոյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Тадевос Тоноян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ, ассистент

Tadevos Tonoyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ tonoyantadevos@ysu.am <https://orcid.org/0009-0001-6827-8258>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 10.11.2024

Գրախոսվել է՝ 05.03.2025

Հաստատվել է՝ 07.03.2025

© The Author(s) 2025

Հոդվածում լեզվամտածողական հոմանիշության գաղափարը խարսխվում է հենց խորհրդանշական բառերի արտահայտած իմաստների հոմանիշության վրա: Հարկավոր է նաև նշել, որ հոդվածը գրելու ընթացքում անհրաժեշտություն է առաջացել անդրադառնալու և ըստ կարելիության որոշակիացնելու մի քանի հասկացություններ, այնպիսի լեզվաբանական տերմիններ, որոնց սահմանումը լեզվաբանությունը վերջնականապես չի ճշգրտել:

Բանալի բառեր – *հոմանիշություն, լեզվամտածողական հոմանիշություն, խոսք, տեքստ, համատեքստ*

Ներածություն

Մեր ուսումնասիրությունները¹ ցույց են տվել, որ միևնույն լեզվով ստեղծված այն տեքստերը, որոնք ժողովուրդը հարկ է համարել ընդգրկել իր հավաքական հիշողության մեջ, այս կամ այն կերպ փոխադարձաբար կապված են: Այդ կապերն առաջին հայացքից այնքան էլ տեսանելի չեն, սակայն խորը վերլուծությունները փաստում են դրանց ներքին կապերը: Դրանց ընդհանրությունը ոչ միայն այն է, որ ստեղծված են պարզապես միևնույն լեզվով, այլև այն, որ նույն լեզվական մտածողության կնիքն են կրում և իրարից անկախ ծառայում են արժեքային նույն համակարգի պահպանմանն ու զարգացմանը: Հիշյալ տեքստերը միավորվում են այնպիսի բառերի ենթաիմաստային առնչություններով, որոնց արտահայտած բառարանային իմաստները, հասկացությունները ամբողջովին հեռու են միմյանցից, այսինքն՝ դրանց միջև բացակայում է բառային առաջին և հիմնական իմաստի կապը: Եվ չնայած այս հանգամանքին՝ տվյալ բառերը սերնդից սերունդ փոխանցվող, այսինքն՝ հավաքական հիշողության մեջ գտնվող տեքստերում հանդես են բերում այնպիսի իմաստային ընդհանրություններ, որոնք բխում են դրանց խորհրդանշային իմաստից, իսկ խորհրդանշային իմաստները առաջանում են տվյալ լեզվով խոսող հանրության, ժողովրդի կամ ազգի աշխարհընկալումներից, մտածողությունից և հոգեբանությունից:

Հետևաբար, հոդվածում մենք առաջ ենք քաշում այն գաղափարը, որ կարիք կա լեզվաբանության բնագավառում գործածության մեջ դնելու նոր տերմին՝ «լեզվամտածողական հոմանիշություն», որը առանձնացնելու է բառերի այն հոմանիշությունները, որոնք դրսևորվում են ոչ թե դրանց բառարանային իմաստների, այսինքն՝ լեզվական մակարդակում, այլ զանազան տեքստերում դրանց խորհրդանշային իմաստների, այսինքն՝ խոսքային մակարդակում:

Այս խնդիրը լուծելու ճանապարհին անհրաժեշտություն է առաջանում կրկին անդրադառնալու «տեքստ» հասկացության ընկալմանը: Իհարկե, մենք չենք հավակնում տալ *տեքստի* սպառիչ սահմանում (մենք մեր առջև նման խնդիր չենք

¹ Տե՛ս Թ. Տոնոյան, Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը: Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2016:

էլ դնում), սակայն մեր նպատակադրման տրամաբանությունից բխում է տեքստերը դասակարգելու պահանջ: Նաև կարիք է առաջանում ինչ-որ չափով ճշգրտելու լեզվաբանության մեջ հայտնի որոշ տերմինների ընկալումը:

Խնդրի հիմնավորումը կախված է հատկապես պատմական տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված տեքստերում լեզվական մտածողության առնչությունները, ապա և գաղափարաբանական ու մշակութաբանական ընդհանրության իրողությունները բացահայտելուց: Մեր նպատակին հասնելուն մեծապես օգնելու է նաև հիշյալ տեքստերում այդ ընդհանրությունների և՛ լեզվական, և՛ խոսքային կողմերը բացահայտելը, քանզի *լեզվամտածողական հոմանիշության* գաղափարը, բնականաբար ունենալով լեզվական հիմք, դրսևորվում է խոսքային մակարդակում:

Ի՞նչ է տեքստը, և ի՞նչ է համատեքստը

Լեզվամտածողական հոմանիշությունը ճիշտ հասկանալու համար մեզ անհրաժեշտ է անդրադառնալ լեզվաբանական մի քանի կարևոր հասկացությունների բովանդակությանն ու նշանակությանը, ինչու ոչ՝ նաև որոշ լրացումներ կատարել այդ ասպարեզում: Մեր խորին համոզմամբ՝ ցանկացած տեքստ այսպես թե այնպես գտնվում է իր համատեքստի վերահսկողության ներքո: Ու որպեսզի կարողանանք ճիշտ հասկանալ այս միտքը, անհրաժեշտ է անդրադառնալ «համատեքստ» եզրաբանվող երևույթին:

Ըստ ակադեմիական ընդունված պատկերացումների՝ լեզվաբանության, գրականագիտության և գրաքննադատության հիմնական հասկացություններից մեկը տեքստն է, և լեզվաբանության մեջ մարդկային լեզվի յուրաքանչյուր կիրառություն տեքստ է, որն ունի սկիզբ, վերջ, և նրա բոլոր բաղադրիչներն ու տարրերը իմաստային կապի մեջ են: Տեքստին անդրանդարձել են շատ վաղուց՝ Ա. Խ. Վոստոկով, Ա. Ա. Պոտերնյա, «տեքստ» հասկացությունը և ընկալումը քննել են, օրինակ, Ջ. Լակոֆը, Վ. Ֆոն Հումբոլդտը, Մ. Ջոնսոնը, Ջ. Լայոնսը, Դ. Շմելյովը, Յու. Կարաուլովը, այլք, որոնցից մի քանիսը հոմանիշայնությանը անդրադառնում են նաև լեզվամտածողության տիրույթում: Օրինակ՝ Յու.Ն. Կարաուլովը տարբերակում է իմաստային դաշտերը (դաշտ՝ «ուրախություն»), թեմատիկ խմբերը («թռչունների անուններ»), հոմանիշային շարքերը («քաջ») և այլն, որոնցում ընդգրկված բառերն այս կամ այն կերպ իմաստային ընդհանրություն, կապ ունեն՝ ըստ սեռի և տեսակի (ծառ՝ կաղնի, եղևնի...), գործառական (բնակարանները՝ տնակ, յուրտ, խրճիթ և այլն), ամբողջի և մասի (շրջագգեստ՝ թև, օձիք, կոճակ...), իրավիճակային (խանութ՝ վաճառող, ապրանք, վաճառասեղան...), ասոցիատիվ-գուգորդական (կով՝ կաթ, խոտ, կթվորուհի, ֆերմա...)²: Բառերի այսպիսի իմաստային փոխկա-

² St' u **Попова З. Д., Стернин И. А.**, Лексическая система языка (внутренняя организация, категориальный аппарат и приемы описания). Изд. 2, испр. и доп., М.: URSS, Книжный дом «Либроком», 2009, էջ 93:

պակցվածություններն առանձնանում են խմբավորման տարասեռ սկզբունքներով, և որքան էլ Յու. Կարաուլովը խոսում է, օրինակ, հոմանիշային շարքերի, դրանց անդամների միջև մտածողական, հոգեբանական ընդհանրությունների, իմաստային հիերարխիայի մասին, այնուամենայնիվ հոմանիշային շարքերի հիմքում ի վերջո բառերի բառարանային իմաստների ընդհանրությունն է: Եվ որքան էլ, օրինակ, Յու. Կարաուլովի ասոցիատիվ-գուգորդական սկզբունքը հարում է մտածողությանը, այնուամենայնիվ սկզբունքորեն հեռու է այն հոմանիշությունից, որը վկայակոչում ենք մենք: Մենք, ընդհակառակը, հիմնավորում ենք հոմանիշությունը այն բառերի միջև, որոնք հոմանիշային շարքի անդամ չեն, սակայն իրենց հատկապես խորհրդանշած երևույթներով են դառնում հոմանիշ այն խորհրդանիշների, որոնք տվյալ ժողովրդի դավանած արժեքների դրսևորումներն են բառային անունների մակարդակով: Լեզվամտածողական հոմանիշությունը, բառային իմաստների միջև եղած հոմանիշությունից զատ, արժեհամակարգում բառ-սիմվոլների բնույթով դրսևորվող հոմանիշությունն է: Այս սկզբունքային դիտանկյունից մեզ հետաքրքրում է Դ. Ն. Շմելյովի հետևյալ սահմանումը. «...Հոմանիշները կարող են սահմանվել որպես միևնույն խոսքի մասին պատկանող բառեր, որոնց իմաստները պարունակում են նույնական տարրեր, իսկ տարբերող տարրերը որոշակի դիրքերում հետևողականորեն չեզոքացվում են: Այլ կերպ՝ բառերը կարող են հոմանիշ ճանաչվել, եթե դրանք հակադրվում են միայն այնպիսի իմաստային հատկանիշներով, որոնք որոշակի համատեքստում դառնում են անկական...»³: Հիշյալ հետաքրքրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հոմանիշայնության խնդրում Դ. Ն. Շմելյովը կարևորում է համատեքստը: Իհարկե, լեզվաբանության մեջ համատեքստի տարբեր ընկալումներ կան: Այս հողվածի տրամաբանությունը պահանջում է ներկայացնել համատեքստի մեր ընկալումը, որի մասին դեռ կխոսենք: Առայժմ միայն հիշենք, որ տեքստի, հետևաբար և համատեքստի ուսումնասիրության վերաբերյալ նոր գաղափարներ են առաջադրվում արդեն միջգիտաձյուղային բնագավառներում նույնպես:

Այսօր լեզվաբաններին գրավում է տեքստի արտաքին հատկանիշներից մինչև բովանդակային տարողության ուսումնասիրությունը: Տեքստը՝ որպես լեզվամտածողության «արտադրանք» կամ որպես լեզվաբանական գիտելիքի նոր մակարդակ, գրավում է շատ լեզվաբանների անմիջական ուշադրությունը:

20-րդ դարի կեսերին լեզվաբանական գիտությունը սկսում է փորձեր կատարել տեքստը լեզվաբանական-քերականագիտական հասկացություն դարձնելու ուղղությամբ: Տեքստը որպես լեզվաբանական հասկացություն դիտարկելուն նպաստում են Ա. Ի. Բելիչի, այնուհետև Ն. Ս. Պոսպելովի աշխատությունները: Ն. Ս. Պոսպելովը գրում է, որ կապակցված խոսքի շարահյու-

³ Шмелев Д. Н. Современный русский язык: Лексика. -М., «Просвещение», 1977, с. 196.

սական կառույցն ուսումնասիրելիս անմիջական ելակետ պետք է համարել ոչ թե նախադասությունը, որը կապակցված խոսքում չունի բավարար ինքնուրույնություն, այլ բարդ շարահյուսական ամբողջությունը՝ որպես շարահյուսական միավոր, որը համեմատաբար ավելի անկախ է կապակցված խոսքի ենթատեքստից⁴: Եվ եթե Պոսպելովը, օրինակ, առանձնացնում է ներկայացվող տեքստի առանձին, «հորիզոնականորեն» կողք կողքի «ապրող» հատվածները, ապա Յու. Լոտմանի համակարգում, որտեղ լեզվաբանական և գրականագիտական-մշակութաբանական գիտելիքները համատեղվում են, **տեքստի մեջ տեքստ**⁵ ըմբռնումն է, որը ներդաշնակ է մեր՝ տեքստը մշակութաբանական «ուղղահայացում» դիտարկելու սկզբունքին:

Մենք համոզված ենք, որ ցանկացած տեքստային հատված ստեղծում ու նման հատվածները միավորում է հենց ասելիք-բովանդակությունը: Խոսողը կամ գրողը փորձում է դեռևս ընդհանուր մտադրության ելակետից այդ ասելիք-բովանդակությունը հնարավորինս հանգամանալից ներկայացնել: Կառուցվածքային լեզվաբանությունը ծանրակշիռ քայլեր կատարել է տեքստի կառուցվածքի արտաքին և ներքին կողմերը ճանաչելու համար, սակայն այդ քայլերը, մեր կարծիքով, առավել արժևորվել կարող են միայն ու միայն տեքստի բովանդակային կողմի հետ համադրելու օգնությամբ: «Այսպես ասած՝ **շարահյուսական ինքնուրույնություն ու ավարտվածություն պահպանող** տեքստի ամբողջականությունն անհնար է պատկերացնել առանց այն ասելիք-բովանդակության, որը տեքստի հեղինակի նպատակադրումն է: Սա, օրինակ, գեղարվեստական տեքստերի դեպքում պահանջում է լեզվաբանական և գրականագիտական-մշակութաբանական գիտելիքների համատեղում»⁶:

Շարահյուսական այս կամ այն հատվածից հնարավոր է զգալ՝ արդյոք այն ծանոթ տեքստի մի մասն է, սակայն, բնականաբար, անհնար է որևէ տեքստային հատվածի օգնությամբ տեքստը ճանաչել ամբողջովին: Նոր տեքստի յուրաքանչյուր նոր հատված ստեղծվում է նախորդող հատվածի տրամաբանության «հսկողությամբ», որը ձևավորվում է բովանդակության հիման վրա: Ցանկացած տեքստային հատված կարելի է տեղավորել ողջ տեքստի տրամաբանության համակարգում. դրան ուղղորդում, նպաստում է այն, ինչ մենք անվանում ենք *բովանդակային պահանջ*: Տեքստն իր բովանդակային պահանջի սպառումը իրականացնում է երկու ձևով՝ անհատական և կոլեկտիվ: Տեքստի տեսակն ու նպատակն են նաև պայմանավորում դրա ժամանակային (պատմական, իրավիճակային) կամ վերժամանակային (վերպատմական, անկախ տվյալ ժամանակային իրավիճակից) լինելը. իմանալու համար՝ քրոնիկապատմական, թե՛ վերպատմական տիպին է պատկանում տվյալ տեքստը,

⁴ Стéу **Поспелов Н. С.**, Проблема сложного синтаксического целого в современном русском языке. Ученые записки МГУ, вып. 137. Труды кафедры русского языка, М., 1948, кн. 2, էջ 31:

⁵ Стéу **Յու. Լոտման**, Միֆ, անուն, մշակույթ: Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի», 2012, էջ 228-235:

⁶ Թ. Տոնոյան, նշվ. աշխ., էջ 139:

նախ, իհարկե, պետք է պարզել, թե այն արդյոք կարողացել է հիմնականում սպառել բովանդակային պահանջը, որին նպատակադրվել է: Եթե տեքստը չի կարողացել հիմնականում սպառել իր բովանդակային պահանջը, անհնար է դառնում տեքստի հիշյալ բնույթը որոշելը: Իհարկե, չպետք է մոռանանք Յու. Ն. Կարաուլովի զգուշացումը, թե որոշ տեքստեր ժամանակի ընթացքում կորցնում են արդիականությունը, մոռացվում, փոխարինվում նորերով⁷:

Մի հանգամանք որոշակի է. դա այն է, որ տեքստի անհատական կամ կոլեկտիվ, քրոնիկ-պատմական կամ վերպատմական-վերժամանակային լինելու հանգամանքը պայմանավորված է տվյալ մշակույթը կրող հանրության հավաքական հիշողության հետ այդ տեքստի առնչության աստիճանով: Այն տեքստը, որը մնում և ամրակայվում է հանրության հիշողության մեջ, բնականաբար ավելի արժևորված է, քան այն տեքստը, որը չի կարողանում այդ «ճանապարհն անցնել» կամ պարզապես չունի այդ նպատակը:

Այս դիտակետից նայելիս առանձնացնում ենք երկու տիպի տեքստեր, որոնք պայմանականորեն անվանում ենք՝

ա) **բարձր տեքստ**, որը պարունակում է հիշողություն-ձայն համադրումը. այս տեսակի տեքստն անընդհատ այս կամ այն կերպ առկա է, ձայնում-խոսում է, հիշեցնում է իր մասին,

բ) **ցածր տեքստ**, որը պարունակում է մոռացություն-լռություն համադրումը. այն մեկ անգամ ասվելուց հետո այլևս չի խոսվում, այլևս չի հիշեցնում իր մասին, քանի որ դիպվածային է, ստեղծվել է միայն խոսքային տվյալ պահի սպասարկման նպատակադրմամբ, չունի հիշվել-չմոռացվելու խնդիր և հավակնություն, և ո՛չ որևիցե անհատ, ո՛չ էլ որևէ հասարակություն, հավաքական հանրություն չունեն, չեն զգում այն հիշելու, մտապահելու կարիք:

Իսկ ինչպե՞ս են տեղի ունենում տեքստի այդ մտապահումը, հիշելն ու պահպանելը, ձայնելն ու գրի առնելը և այդպիսով սերնդեսերունդ փոխանցելը: Չանազան տեքստերից հիշողությունը առանձնացնում և պահպանում է միայն նրանք, որոնք ներդաշնակ են իր պարունակությանը և կարող են լրացնել այն: Իսկ ո՞րն է այդ պարունակությունը: Ահա հենց այստեղ է, որ ի հայտ է գալիս համատեքստին անդրադառնալու հրամայականը:

Ուրեմն, ի՞նչ է **համատեքստն** ինքը ընդունված պատկերացումներով, ապա և՛ ի՞նչ է այն մեր պատկերացմամբ: Մա ճշտելը մեզ համար անչափ կարևոր է, քանի որ լեզվամտածողական հոմանիշություն երևույթը հնարավոր է բացատրել միայն ու միայն համատեքստի տիրություն, և մենք կարծում ենք, որ կարիք կա «համատեքստ» հասկացության ընկալման ճշգրտման:

Համատեքստը մասնագիտական գրականության մեջ **կոնտեքստն** է⁸՝ լատիներեն *contextus* «կցում, միացում, կապ» իմաստով բառից: Ներկայացվում

⁷ Տե՛ս Ю. Караулов Ю. Н., Русский язык и языковая личность. М.: «Наука», 1987, էջ 216:

⁸ Տե՛ս Ա. Ստրիպայան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 334:

է որպես «խոսքային շղթայի՝ իմաստով ու ձևով ավարտուն, ամբողջակա- նություն ներկայացնող այն հատվածը, որի սահմաններում պարզորոշ նկատվում է նրա մեջ մտնող լեզվական տարրերի, միավորների նշանակու- թյունը»⁹: Մեկ այլ տեղում կոնտեքստը *գրվածքի ավարտուն շարադրանք*¹⁰ է:

Նույն լեզվով ստեղծվող տեքստերը այսպես թե այնպես նույն լեզվամտ- ծողության պարտադիր կնիքն են կրում: Այդ տեքստերը միավորվում են նաև այն կարևոր իրողությամբ, որ ստեղծվում են նույն մշակութային ժառանգու- թյան միջավայրում: Մշակութային դաշտում, մասնավորապես գեղարվեստա- կան գրականության մեջ դրանցից յուրաքանչյուրը ինքնաբերաբար թե նպա- տակադրված ծառայում է նույն արժեհամակարգային իրողությունների ան- ընդհատական հիմնավորմանը, պահպանմանը, վերարտադրմանը, արդա- րացմանն ու յուրովի հանրահռչակմանը: Այսպիսին են մանավանդ այն տեքստերը, որոնք ընդունվում ու հիշվում են տվյալ ժողովրդի մշակութային ողջ ժառանգության մեջ, հիշվում են, որովհետև կարևորվում են, կարևորվում են, որովհետև պարունակում են այնպիսի տեղեկություններ և գաղափարներ, որոնցով տվյալ ժողովուրդը փորձում է ապրել, առաջ ընթանալ, քաղա- քակրթվել, ետ չմնալ համաշխարհային առաջադիմությունից՝ միաժամանակ պահպանելով ինքնությունը: Նույն գաղափարներն ու ձգտումները, նույն ակնկալիքներն ու երազանքները ժողովրդին միավորում են առավելապես այդ ամենն ամփոփող տեքստերի միջոցով, որոնք մեծ առումով դառնում են ներքին, աներևույթ թելերով շաղկապված համընդհանրություն՝ համա- տեքստ: **Համատեքստը տվյալ լեզվով ստեղծված այն տեքստերի ամբողջու- թյունն է, որոնք տվյալ ժողովուրդը կարևորում է հիշելով, մտապահելով ու սերնդեսերունդ փոխանցելով:** Ուրեմն լայն առումով համատեքստը տվյալ լեզվով տվյալ մշակութային միջավայրում ժամանակի ընթացքում ստեղծ- ված, **կարևորված ու հիշված** տեքստերի այնպիսի **ամբողջությունն է**, որի մեջ կա **աշխարհընկալումային ընդհանրություն, արժեհամակարգային ընդհան- րություն:** Մեր այս հոդվածում *համատեքստ* տերմինը հատկապես այս վեր- ջին սահմանմամբ է օգտագործվում, և կարծում ենք, որ երբ համատեքստ է անվանվում միայն մեկ ավարտուն տեքստի պարունակությունը, խիստ սահ- մանափակվում է հենց այդ տեքստը խորությամբ ընկալելու և հասկանալու հնարավորությունը, **քանի որ այդպես այն արհեստականորեն տարանջատ- վում է նույն լեզվամտածողական ոլորտից, որը տարածվում է միաժամանակ թե՛ նույն ժամանակի հորիզոնական հարաբերություններում, թե՛ տարբեր դարաշրջանների ուղղահայաց հարաբերություններում:** Եվ մենք համոզված ենք, որ հանրային հարաբերությունների **հորիզոնականում** ուսումնասիրե- լուց առաջ հարկ է, որ տեքստերն ուսումնասիրվեն սերնդեսերունդ փոխանց- վող նույն մշակութային դաշտի տարբեր ժամանակաշրջանների **ուղղահայա-**

⁹ **Զ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 307:

¹⁰ Տե՛ս **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հր., 1976, էջ 756:

ցում: Յուրաքանչյուր սկսված-ավարտված տեքստ մի հատվածն է տվյալ լեզվով ստեղծված, հիշված, այսինքն արժևորված ու դրա շնորհիվ հիշված ու արձանագրված տեքստերի ամբողջություն-համատեքստի:

Նեղ առումով կարող է լինել որևէ առանձին ստեղծագործության համատեքստ, որևէ գրողի ողջ ստեղծագործության համատեքստ, ինչպես ընդունված է, սակայն լայն առումով դրանք իրենց հերթին միշտ հատվածն են այս կամ այն լեզվով գոյություն ունեցող համատեքստի:

Եվ ի՞նչ է նշանակում **արձանագրված**. այստեղ նկատի ունենք **ամեննին էլ ոչ թե հատկապես գրավոր արձանագրված, այլ նախ ընդհանրապես հիշողության մեջ արձանագրված խոսքը**, այնպիսի խոսքը, որը շաղկապվում է **հիշողությանը**, այնպիսի խոսքը, որն արժանացել, արժանանում և արժանանալու է տվյալ լեզվով խոսող ժողովրդի հիշողության մեջ տեղ ունենալու: Այս տրամաբանությամբ տարբեր ժողովուրդների բանահյուսական նմուշները տեքստ են և՛ այն ժամանակ, երբ դեռ գրի առնված չէին, բայց ժողովրդի հիշողության մեջ արձանագրված ապրում էին, և՛ այն ժամանակ, երբ արդեն դրանք գրի են առնվել և արձանագրվել:

Տվյալ տեքստի բովանդակությունը հասկանալու համար հարկավոր է պարզապես կարդալ այն, սակայն դրա արժեքայնությունը բացահայտելու համար պարտադիր է իմանալ, թե ինչ համատեքստի մաս է այն և ինչ գործոնների շնորհիվ է դարձել տվյալ համատեքստի մաս:

Գրական տեքստի արժևորումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե ներքին ինչ կապեր, ընդհանրություններ ունի տվյալ լեզվով արդեն ստեղծված, տվյալ լեզուն կրող ժողովրդի հիշած, պահպանած մյուս տեքստերի հետ:

Իսկ ընդհանրապես արդյոք կա՞ն այդ նույնժամանակային, առավել ևս վերժամանակային ընդհանրություններն ու կապերը:

Այս առումով պետք է կարևորենք «տեքստը տեքստի մեջ» գաղափարը, որին, կարծում ենք, շատ մոտ է Վ. Բ. Կասևիչի տեսակետը. «Տեքստը լայն իմաստով հենց այն է, ինչ խոսքը... տեքստը նեղ առումով խոսքի միավոր է...»¹¹: Չմիջամտելով կոնկրետ տեքստի՝ խոսքայի՞ն, թե՞ լեզվական միավոր լինելու բանավեճին՝ կարծում ենք՝ տեքստը միաժամանակ և՛ որպես միկրոհամակարգ, և՛ որպես մակրոհամակարգ դիտարկելու սկզբունքին զուգահեռ է տեքստ և համատեքստ ընկալումների փոխկապակցվածությունը: Տարբերությունը թերևս միայն այն է, որ եթե միկրո- և մակրոհամակարգերի սկզբունքը կիրառվում է նույն տեքստի ամբողջության և դրա որևէ հատվածի միջև, ապա տեքստ - համատեքստ հարաբերությունը նույն լեզվով ստեղծված և այդ լեզուն կրող, ժողովրդի արժևորած տեքստերի կապն է լեզվամտածողական մակարդակում, ինչն էլ իր հերթին ենթադրում է, որ այդ տեքստերը

¹¹ Касевич В. Б. Семантика. Синтаксис. Морфология. М., 1988, с. 50–51.

**անայայմանորեն ընդհանրություններ ունեն նաև իրենց պարունակած արժե-
համակարգային իրողությունների առումով:**

Նույնալեզու տեքստերի արժեքային ընդհանրությունները

Նույն լեզվով ստեղծվող տեքստերը պարտադիր նույն լեզվական մտածո-
ղության կնիքն են կրում: Այդ տեքստերը ստեղծվում են նույն մշակութային
ժառանգությունը կրող ժողովրդի ստեղծած մշակութային տիրույթում, իսկ
այդ տիրույթում մտածողությունը երկու սկիզբ ունի՝ ժառանգական-կաղա-
պարային և անհատական-գարգացող:

Յուրաքանչյուր կոնկրետ տեքստ խարսխվում է կոնկրետ լեզվի համա-
տեքստային մտածողության վրա, և հատկապես հենց տվյալ լեզվով ստեղծ-
ված համատեքստն է իր առանցքի շուրջը հավաքում տվյալ լեզուն կրող ժո-
ղովրդի դավանած արժեհամակարգը: Այսինքն՝ ցանկացած արժեհամակարգ
կոնկրետ լեզվական հենք ունի և խարսխվում է այն խորհրդանշային գաղա-
փարների վրա, որոնց բառային անունները հայտնվում են համատեքստային
արժեք ունեցող, այսինքն՝ բարձր տեքստերի առանցքներում: Լեզվամտածո-
ղական հոմանիշությունն էլ ի հայտ է գալիս և դրսևորվում հենց այդ խորհր-
դանիշ բառերի, անունների միջև: Ընդ որում՝ դրանք կարող են հոմանիշույթ-
յուն հանդես բերել և՛ իրենց պարունակած բովանդակության ու իմաստի ամ-
բողջականությամբ, և՛ այդ բովանդակության և իմաստի այս կամ այն մասով:
Ուրեմն՝ **լեզվամտածողական հոմանիշությունը ոչ այնքան լեզվական, որքան
խոսքային (տեքստային) երևույթ է, քանի որ ի հայտ է գալիս ոչ թե լեզվի կա-
նոնիկ, կաղապարային վիճակներում և ձևերում, այլ հերմենևտիկական
գաղտնիքի բացահայտման գործընթացում**, երբ մասը (այս դեպքում՝ որևէ
կոնկրետ տեքստ) հասկանալու համար անհրաժեշտ է պատկերացում ունե-
նալ ամբողջի (այս դեպքում՝ համատեքստի, այսինքն՝ ըստ մեր պատկերաց-
ման՝ տվյալ լեզվով ստեղծված արժեքավոր տեքստերի ամբողջության) մա-
սին, բայց և ողջը՝ համատեքստը, հասկանալու համար անհրաժեշտ է հաս-
կանալ մասը (որևէ կոնկրետ տեքստ կամ նույնիսկ տեքստային հատված):

Խորհրդանշայնությունը ժողովրդի լեզվի, ոգու և մտածողության արգա-
սիքն է, տվյալ լեզվով խոսող ժողովրդի արժեքային համակարգի խտացած
արտահայտությունը լեզվախոսքային միավորի, տվյալ դեպքում՝ խորհրդա-
նիշի մակարդակ բարձրացած բառի խորհրդանշային իմաստի տիրույթում,
ուստի հոմանիշային այդ դրսևորումը ճիշտ կլինի անվանել **լեզվամտածողա-
կան հոմանիշություն**: Լեզվամտածողական հոմանիշությունը որևէ խորհր-
դանշային իմաստով միջնորդավորված հոմանիշությունն է: Բնականաբար,
լեզվամտածողական հոմանիշության օրինակներն ավելի քիչ են, քան, ա-
սենք, սովորական բառային հոմանիշներ:

Որպեսզի այս ամենն ավելի պատկերանալի և շոշափելի լինի, անհրա-
ժեշտ ենք համարում ներկայացնել լեզվամտածողական հոմանիշության ո-

րոշ դիպուկ օրինակներ: Նախ տեսնենք, թե որ բառերը և դրանց արտահայտած գաղափարներն են հայտնվում և որոշակի, համեմատաբար ավելի ակտիվ դեր ստանձնում համատեքստային արժեք ունեցող, (այսինքն *բարձր տեքստերի*) առանցքներում:

Նման առանցքային բառ է, օրինակ, **ձայն**-ը: Հայերենի տեքստերում այն հանդես է գալիս գեղարվեստական տարբեր մարմնավորումներով՝ մեկ որպես կերպար, մեկ որպես խորհրդանիշ, մեկ որպես անուն և այլն: **Չայն** բառի այս դերակատարությունները ընդհանուր հայտարարի բերելուց հետո պարզվում է, որ լայն իմաստով այն կենսականության բացառիկ նշան է և մշտապես շաղկապվում է ոչ միայն պարզապես կյանքին ու կենդանությանը, այլև հատկապես բանական-մշակութային-քաղաքակրթական գոյությանը՝ **լինելությանը**: Այս երևույթին մենք անդրադարձել ենք տասական թվականներին և դրանից առաջ՝ ընդգծելով ձայն - բառ - տեքստ շղթան՝ որպես հայերենով ստեղծված արժեքավոր տեքստերի արժեհամակարգային առանցք, որպես, օրինակ, արարիչ - ձայն - գոյություն - բան - խոսք - գիր - անուն - կյանք (քաղաքակրթական գոյություն, լինելություն և այլն) բառերի ու երևույթների խորհրդանշային ընկալման հոմանիշային ընդհանրություն ու միասնականություն¹²: Չայնի՝ որպես քաղաքակրթականության խորհրդանիշ, անդրադառնում է նաև գրականագիտությունը¹³:

Դեռևս Խորենացու «Հայոց պատմության» «Ողբի» մեջ հանդիպում ենք *ձայն*-ի, դրա հականիշի՝ *լռություն*-ի, *խոսք*-ի խորհրդանշական դերակատարությանը՝ «Ո՞վ պետք է նրանց պապանձեցնե, սաստելով և մեզ սփռվի գովելով և չափ դնե խոսքի և լռության»¹⁴ կամ «...նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն և օրհնությունը»¹⁵:

Ասվածի փաստումները զգալի են հատկապես հայ բանաստեղծության տեքստային տարածքում: 20-րդ դարասկզբի հայ բանաստեղծի՝ Միսաք Մեծարենցի տողերում **ձայնը** մշտապես ուղեկցում է **Հոգուն**: հոգին անմահ է, այսինքն՝ ամբողջովին հավերժական կյանքի կամ կյանքի հավերժության **խորհուրդն է**.

Ես դեռ կըսպասեմ ալեկոճ Անցքի՛ն,
Նայվածքըս լեցուն իդձով կաթոզին,
Ա՛հ, քու կո՛ եմ արդեն, ո՛վ միստիք ցնցում,
Ո՛վ **ձայն**, մինչ ուժգին **հոգվույս** կը փարիս...¹⁶ :

¹² Տե՛ս «Գրականագիտական հանդես», Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Հայաստանի գրողների միություն, 2012, թ. 13, էջ 189:

¹³ **Ն. Վ. Համբարձումյան**, Տեքստ և մեկնություն: Հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., «Տիր» հրատ., 2013, էջ 30-37:

¹⁴ **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 315:

¹⁵ Նույն տեղում, էջ 314:

¹⁶ **Մ. Մեծարենց**, Երկերի լիակատար ժողովածու, Եր., Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 56:

Մեծարենցը ձայնին է վերապահում նաև երկու՝ այս աշխարհի և անդրաշխարհի շաղկապման «գործառույթը».

Շիրժ մ'արցունքով՝ կաթիլ մը խունկ
Մրբանոթին մեջ կը ցանե
Մայրս՝ որ կ'անցնի անտես դռնե
Եվ երջանիկ կը դընե ունկ
Անդրաշխարհեն եկող **ձայնին**¹⁷:

Հիշենք Հովհաննես Թումանյանի տողերը խորհրդավոր **ձայնի** մասին.
Իմ սուր, արթուն ականջում
Մի խոր **ձեն** է միշտ հընչում,
Անհու ն, անքու ն կարոտով
Իրեն մոտ է ինձ կանչում¹⁸:

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի գլխավոր դերակատարները նաև **ձայնն** ու **խոսքն** են, սրտի խորքերում Աստծու հետ խոսվող խոսքը: Հենց **ձայն** բառով էլ սկսվում է Գրիգոր Նարեկացու աշխարհահոռչակ պոեմը, և **ձայն**-ը կարծես ողջ պոեմի բանալին լինի.

Չա յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի
Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց...¹⁹:

Իհարկե, անհատական տեքստերից մեջբերված օրինակները խնդրո առարկայի առումով արժևորվել կարող են, եթե մենք համապատասխան օրինակներ ներկայացնենք կոլեկտիվ-բանահյուսական տեքստերից, քանի որ առաջին հերթին հենց դրանք են ժողովրդի հավաքական մտածողության և արժեքային համակարգի դրսևորումները: Իսկ այդպիսի օրինակներ հայ ժողովրդի բանահյուսական տեքստերում շատ կան.

Կռո՛ւնկ, ուստի՞ կու գաս, ծառայ եմ **ձայնիկդ**,
Կռո՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս...
.....
Կռո՛ւնկ, պահ մի կացի՛ր, **ձայնիկդ** հոգիս,
Կռո՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս²⁰:

Այս դեպքում անհնար է մոռանալ փաստը, որ հայ ժողովրդի էպոսի՝ «Մասնա ծոերի» գլխավոր հերոսներից մեկը կոչվում է **Ձենով** Հովան: Ինչո՞ւ է Ձենով Հովանը «Ձենով»: Այն, որ ձայն-ը, իրոք, կյանքի, կենդանության երաշխիք է, ապացուցվում է մեր էպոսի այն հատվածում, որտեղ թշնամին՝ Մսրա Մելիքը, խաբեությանը Դավթին գցում է գաղտնի փորված փոսը և հսկայական քարեր է դնում վրան, այսինքն՝ Դավթին ողջ-ողջ թաղում է: Դավիթը ան-

¹⁷ Նույն տեղում, էջ 184:

¹⁸ **Հ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 2, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Արբելյանի անվան գրականության ինստիտուտ, 2018, էջ 21:

¹⁹ **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, Եր., 1985, էջ 247:

²⁰ «Հայ հին և միջնադարյան քնարերգություն», Եր., «Լույս» հրատարակչություն, 1986, էջ 47:

գոր ու անօգնական է: Հայի ընկալմամբ՝ սերունդների արյունակցական կապը ապահովվում է հայրական կողմով: Ահա, Ձենով Հովանը՝ Դավթի հորեղբայրը, այսինքն՝ արյունակիցը, արյան կանչով զգում է իր ցեղին սպառնացող վտանգը և տեսնում է հայտնի երազը այն մասին, որ իր երկրի աստղը խավարում է, իսկ թշնամի երկրի աստղը՝ շողշողում: Ձենով Հովանը նույն վատ երազը տեսնում է երեք անգամ: Առաջին և երկրորդ անգամ նա, վախեցած վեր թռչելով, կնոջը պատմում է տեսածը, բայց կինը նրան հորդորում է հանգիստ քնել (Հովանի կինը արյունակցական կապ չունի Դավթի հետ), ու նա փորձում է շրջվել ու դարձյալ քնել: Երրորդ անգամ Ձենով Հովանը վեր է կենում և բարձրանում սարի գագաթը՝ Դավթին **ձայն տալու**: Ֆիզիկապես բարձր ու ուժգին, հեղինակավոր լինելուց առաջ Ձենով Հովանի ձայնը նախ **արյան կանչի** խորհուրդն ունի:

Ուշադրություն դարձնենք, որ մինչև իր արյունակից հորեղբոր կանչի ձայնը լսելը Դավթի թույլ, գրեթե մեռած ընկած է ջրաղացի հսկա քարերի տակ և ոչինչ չի կարողանում անել մահվան այդ «թակարդից» դուրս պրծնելու համար: Հենց որ **ձայնը** (որի մեջ Ձենով Հովանը հավաքել ու դրել է իր ցեղի արյան կանչը, այսինքն՝ ձայնը, այդ ձայնի ողջ ուժն ու կենսականությունը) նրա ականջին է հասնում, նա ուժեղանում է և զարկելով, փշրելով իր վրա դրված ջաղացքարերը՝ վերածնված դուրս է գալիս մահվան փոսից:

Սա նշանակում է, որ հայերենի լեզվամտածողության մեջ ձայնն ունի մարդուն կյանք վերադարձնելու հատկություն: Երբ Հովանը սարի վրայից բղավում, այսինքն՝ **ձայն է տալիս** արդեն ջրաղացի քառասուն քարի տակ ընկած Դավթին, այդ ձայնով կյանք, կյանքի ուժ, կենսականություն է հաղորդում իր եղբորորդուն:

Ձայնը դառնում է կյանքի ներարկիչ, և ձայն հղելով՝ Հովանը նորոգում է իր ցեղի (Դավթի) գրեթե կտրված շղթան ու սերունդների միջև կապը:

Ձայն տալը, փաստորեն, ըստ էության, արյան կանչն է, կենսական արյուն տալը, կենդանության վերադարձնելը, կյանքի վերընձյուղումը, եթե կուզեք, հարությունը: Ահա թե ինչպես է ստեղծվում լեզվամտածողական հոմանիշությունը: Ձայն-ը, արյուն-ը, կյանք-ը լեզվամտածողական հոմանիշներ են: Հայերենի համատեքստով մեկ սփռված են այնպիսի հատվածներ, որոնք փաստում են ձայն-ի, կյանք-ի և արյուն-ի այս հոմանիշային միասնությունը:

Ներկայացնենք ևս մեկ օրինակ. 14-15-րդ դարերի բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցու բանաստեղծության մեջ **ձայնը** կենսականության ու կենսաստեղծման խորհրդ ունի. **ուս ձայն տաս, նա կկենդանանա՝ կծաղկի**.

Զով դու սիրով ի ներս **ձենես**

Ծաղկի քան զծառըն խնկենին... ²¹:

²¹ Նույն տեղում, էջ 244:

Ձենով Հովանն էլ ձայն տալով կենդանացնում, «ծաղկեցնում» է խոր հորում մեռնող Դավթին: Հատկանշական է, որ Հովանի ձայնի և Դավթի արանքում հենց **քարերն** են, հսկա ջրադացքարերը:

Եթե **ձայն**-ը և **կյանք**-ը լեզվամտածողական հոմանիշներ են, ապա տրամաբանորեն ենթադրելի է, որ լեզվամտածողական հոմանիշներ պետք է լինեն նաև ձայն-ի հակառակը՝ լռություն-ը, և կյանք-ի հակառակը՝ մահը: Այսինքն՝ լռություն-ը և մահ-ը նույնպես, թեև բառային հոմանիշներ չեն, պետք է լեզվամտածողական հոմանիշներ լինեն:

Հայերենում **լռությունը**, այսինքն՝ ձայնի հականիշը, հաճախ գուգադրվում է **քար** իմաստի հետ՝ քար լռություն, իսկ լռությունը, ըստ տրամաբանության, պետք է որ մահվան հետ լեզվամտածողական հոմանիշություն դրսևորի, քանի որ ձայնը կյանքի հետ է հանդես բերում լեզվամտածողական հոմանիշություն: **Ջրադացքարերի տեսքով մահը կանգնում է Հովանի ձայնի, այսինքն՝ կյանքի ճանապարհին: Քարերը (քար լռություն մահը), սակայն, չեն կարող փակել ձայնի (կյանքի) ճանապարհը:** Ահա թե ինչու Ձենով Հովանը ձայն տալով **կյանք** է տալիս Դավթին:

Երբ մեկնումեկը քնած է, և նրան արթնացնել է պետք, ասում են՝ գնա և նրան **ձայն տուր: Ձայն տալ**-ը դարձված է, որը նշանակում է արթնացնել, ինչը պետք է հասկանալ կյանք տալու իմաստով, քանի որ քունը մահվան թագավորությունն է խորհրդանշում:

Բերենք օրինակներ, որոնք փաստում են, որ հայերենի ողջ համատեքստում լեզվամտածողական հոմանիշություն ունեն լռություն և մահ բառերը: Հիշենք դասական պոեզիայի մի քանի նմուշներ. Վահան Տերյանի հայտնի բանաստեղծության մեջ ասվում է.

Սիրող թող միշտ խնդա կամ լա- **մահ** է մթին, երբ **լուռ** է նա²²:

Չի կարելի շրջանցել նաև Վահան Տերյանի «Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում» սկիզբն ունեցող բանաստեղծությունը, որի մեջ հստակ է ձայնի բացակայության (լռության) և մահվան գուգադրումը.

Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում,
Երբ **լուռ** եմ օրվա աղմուկները զվարթ,
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները - ննջում,
Երբ մթնում կորչում են լեռ ու արտ:

Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցեք,
Որ խաղաղ ու հանդարտ մահանան.
Ինձ **անլաց** թաղեցեք, ինձ **անխոս** թաղեցեք.
Լռությո՜ւն, լռությո՜ւն, լռությո՜ւն անսահման...²³:

²² Վ. Տերյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 2, Եր., 1973, էջ 101:

²³ Նույն տեղում, էջ 23:

Տերյանի բանաստեղծությունը մեկ անգամ չէ, որ համադրում է լռություն-ը և մահ-ը.

Ա՛յն, այն գիշերը՝ անսահման երկա՛ր,
Այն լռությունը՝ մահու պես տխուր²⁴:

Կամ՝

Գիշեր է և **լռություն**,
Լռություն է իմ հոգում,
Ո՛չ **անուրջ** կա ապարդյուն,
Ո՛չ սեզ **ըղձանք** ու **խոկում**...²⁵:

Մարդկային հոգում անուրջի և երազանքի բացակայությունը մահվան նշան է:

Հայ բանաստեղծության մյուս դասականը՝ Եղիշե Չարենցը, իր շատ հայտնի բանաստեղծություններից մեկը՝ «Անվերնագիրը», սկսում է լռության ու մահվան լեզվամտածողական հոմանիշությունը փաստող հետևյալ տողով.

Իմ **մահվան** օրը կիջնի **լռություն** ...²⁶:

Եվ այս առումով անհնար է չհիշել նաև Չարենցի «Մահվան տեսիլ»-ներից մեկը, որի մեջ կախադանի, այսինքն՝ մահվան պարանն ու երկնուղեշ փայտերը՝ որպես մահվան խորհրդանիշներ, «աճում են» լռության տիրույթում:

Կանգնել են, **լուռ**, իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերում,
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
Անբոց մորմոքը նայիրյան իմ ո՞րք հոգու:
Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
Ու **լռություն** մի անսովեր, անդուռ, անդող,
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
Մահվան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանտող...²⁷:

Հետևյալ տողերում Թումանյանի ձայնը մասնավորապես **քաղաքակրթական լինելությունն է ներկայացնում**, ու եթե այն անպատասխան է մնում, ուրեմն կորուստը, այսինքն՝ մահը, անխուսափելի է.

Ո՞ր կորան...
Մոտիկներս ո՞ր կորա՛ն,
Ինչքան լացի, **ձեն** ածի՛
Ձեն չի տըվին, **լո՛ւտ** կորան²⁸:

²⁴ Վ. Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. 1, Եր., «Հայպետհրատ.», 1960, էջ 26:

²⁵ Նույն տեղում, էջ 106:

²⁶ Ե. Չարենց, Պոեմներ և բանաստեղծություններ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1984, էջ 711:

²⁷ Նույն տեղում, էջ 306:

²⁸ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, Երևան, ՀՀ ԳԱԱ Ս. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, հ. 2, էջ 13:

Իհարկե, մեկ հոդվածի սահմաններում անհնար է անդրադառնալ ձայնի ու կյանքի, լռության ու մահվան լեզվամտածողական հոմանիշությունը հաստատող բոլոր օրինակներին, սակայն մեջբերվածներն էլ քիչ չեն և ապացուցում են լեզվամտածողական հոմանիշություն երևույթի գոյությունը:

Եզրակացություն

Մույն հոդվածով առաջարկվում է լեզվաբանության ասպարեզ մտցնել նոր տերմին՝ **լեզվամտածողական հոմանիշություն**: Մեթոդապես ցույց է տրվել, որ այդ նոր տերմինի կարիքը զգացվում է միևնույն լեզվի տիրույթում ստեղծված տեքստերի ուսումնասիրության ընթացքում: Դրա համար որպես նյութ են ծառայել հայերենով ստեղծված այնպիսի տեքստեր, որոնց կենսունակությունը և բարձր արժեքը ապացուցվել են ժողովրդի հավաքական հիշողության հետ կապով: Ե՛վ հայերեն, և՛ այլ լեզուներով ստեղծված տեքստերը այդ լեզուներով խոսող հանրությունների, ժողովուրդների լեզվամտածողական արժեհամակարգերի արտացոլանքն են, և դրանք արժեհամակարգային իրողությունների ընդհանրականությամբ կապված են միմյանց: Հոդվածի կարևոր ելակետերից մեկն էլ հենց այդ ընդհանրականությունը ապացուցելն էր: Իհարկե, նման խնդրի առաջադրումը տրամաբանորեն հանգեցնում է այն բանին, որ կարիք է առաջանում ճշգրտել և լրացնել լեզվաբանության մեջ եղած որոշ գաղափարների, իրողությունների վերաբերյալ արդեն գոյություն ունեցող պատկերացումները, ի վերջո նաև տերմինների ընկալումները: Նման խնդրի բախվել էինք, երբ անհրաժեշտություն էր առաջացել ճշտելու համատեքստի վերաբերյալ պատկերացումները: Նույնպիսի պահանջ առաջացավ նաև առանձին տեքստեր դասակարգելու սկզբունքների առումով:

Մեր նպատակին հասնելու համար գտել ենք համապատասխան փաստական նյութ և հիմնավորել ենք խորհրդանիշների կամ խորհրդանշային նշանակություն ունեցող բառերի միջև իմաստային ընդհանրությունը: Դա էլ մեզ օգնել է բացահայտելու **լեզվամտածողական հոմանիշություն** երևույթը:

ТАДЕВОС ТОНОЯН – Лингвоментальная синонимия. – В данной статье рекомендуется ввести в оборот в области лингвистики новый термин: **лингвоментальная синонимия**. Методически показано, что потребность в этом новом термине ощущается при изучении текстов, созданных в области одного и того же языка. Материалом для этого послужили тексты, созданные на армянском языке, высокая ценность которых доказана тем, что они надолго связаны с коллективной памятью народа. Тексты, созданные как на армянском, так и на других языках, являются отражением языковых ценностных систем общин и народов, говорящих на этих языках, и связаны между собой общностью ценностных реалий. Одной из важных отправных точек статьи было доказательство этой общности. Разумеется, постановка такой задачи логически приводит к необходимости уточнения и дополнения существующих в лингвистике представлений об определенных реалиях и, в конечном итоге, о понятии определенного термина. С такой проблемой мы столкнулись, когда нужно было уточнить представления о контексте.

Аналогичное требование возникло и в отношении принципов классификации отдельных текстов.

Для достижения нашей цели мы нашли соответствующий материал и обосновали смысловую общность между символами или словами, имеющими символическое значение. Это также помогло нам зафиксировать явление лингвоментальной синонимии.

Ключевые слова – синонимия, лингвоментальная синонимия, речь, текст, контекст.

TADEVOS TONOYAN – *The Linguistic-Mental Synonymy.* – In this article, an attempt was made to introduce a new term into the field of linguistics: *linguistic-mental synonymy*. It was methodically shown that the need for this new term began to be felt during the study of the texts created in the domain of the same language. The texts created in Armenian served as material for this, the vitality and high value of which was proved by their connection with the collective memory of the people. Texts created both in Armenian and in other languages are a reflection of the linguistic value systems of the communities and peoples who speak those languages, and these texts are connected to each other by internal ties, especially by the generality of value system realities. One of the important starting points of the article was to prove that generality. Undoubtedly, posing such a problem logically leads to the fact that there is a need to correct and complete the already existing understandings of some ideas and realities in linguistics, and ultimately also the understanding of terms. We faced such a problem when it was necessary to clarify the ideas about the context. A similar demand also arose regarding the principles of classification of individual texts.

We tried to find the semantic commonality between symbols or words with symbolic meaning appearing in the texts. This led us to record the phenomenon of *linguistic-mental synonymy*.

Key words: *synonymy, linguistic-mental synonymy, speech, text, context.*

Գրականության ցանկ

Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976

«Գրականագիտական հանդես», Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Հայաստանի գրողների միություն, 2012, թ. 13

Թումանյան Հ. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով (1988-1999), հ. 8, Երևան, 1999, 710 էջ

Թումանյան Հ. Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, հ. 2, 2018, 687 էջ

Լոտման Յու. Միֆ, անուն, մշակույթ, Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի», 2012, 344 էջ

Խորենացի Մ. Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981, 428 էջ

Համբարձումյան Ն. Վ. Տեքստ և մեկնություն: Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, «Տիր», 2013, 176 էջ

«Հայ հին և միջնադարյան քնարերգություն», Երևան, «Լույս» հրատարակչություն, 1986, 463 էջ

Մեծարենց Մ. Երկերի լիակատար ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 456 էջ

Նարեկացի Գ. Մատեան ողբերգութեան, Երևան, 1985, 1124 էջ

Չարենց Ե. Պոեմներ և բանաստեղծություններ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984, 752 էջ

- Պետրոսյան Հ.** Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1987, 688 էջ
- Սուքիասյան Ա.** Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967
- Տերյան Վ.** Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր 1, Երևան, Հայպետհրատ, 1960, 384 էջ
- Տերյան Վ.** Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 2, Երևան, «Հայաստան», 1973, 418 էջ
- Տոնոյան Թ.** Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ», 2016, 404 էջ
- Караулов Ю. Н.** Русский язык и языковая личность. Москва: «Наука», 1987, 363 с.
- Касевич В. Б.** Семантика. Синтаксис. Морфология. Москва: Главная редакция восточной литературы издательства «Наука», 1988. - 309 с.
- Попова З. Д., Стернин И.А.,** Лексическая система языка (внутренняя организация, категориальный аппарат и приемы описания). Изд. 2, испр. и доп. М.: URSS, Книжный дом «Либроком», 2009, 172 с.
- Поспелов Н. С.,** Проблема сложного синтаксического целого в современном русском языке. Ученые записки МГУ, вып. 137. Труды кафедры русского языка, М., 1948, кн. 2, с. 31-41
- Шмелев Д. Н.** Современный русский язык: Лексика. -М., «Просвещение», 1977, 335 с.